ԱՍՏԾՈ ՏՈՒՆԸ ԵՎ ԿԵՆԱՑ ՁՐԻ ԳԵՏԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԾՆՆԴ. 2.8-10

8 Եվ Տեր Աստված մի պարտեզ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմ, և իր արարած մարդուն դրեց այնտեղ: 9 Եվ Տեր Աստված հողից բուսցրեց տեսքով հաճելի և քաղցրահամ պտուղներով բոլոր ծառերը և պարտեզի մեջտեղում՝ կենաց ծառը և բարին ու չարը գիտենալու ծառը:

*10 Եւ **մի գետ էր դուրս գալիս Եդէմից** պարտէզը ջրելու համար, եւ այնտեղից բաժանվում ու չորս գլուխ էր դառնում:*

Սաղմոս 46.4 – Բայց գետն իր առուներով կուրախացնի Աստծու քաղաքը, Բարձրյալի սուրբ բնակարանները:

*Եսայի 33.21 – <u>Այնտեղ</u> Տերը իր մեծափառության մեջ մեզ համար **կլինի** լայնատարած <u>գետերի, վտակների վայր</u>:*

- *Նկատեցիք՞ – ոչ թե պարզապես Սիոնում գետեր կան, այլ հենց **Նա** Ինքն է գետերի տեղը:*

Եւ մի գետ էր դուրս գալիս Եդէմից (տանից)

ՏԱՃԱՐԻՑ ՀՈՍՈՂ ԳԵՏԸ – ԿՅԱՆՔԸ ՆԵՐՍԻՑ ԴԵՊԻ ԴՈՒՐՍ (ԵԶԵԿԻԵԼ 47.1–12)

Եզեկիելը տեսավ տեսիլք՝ ջուր հոսում էր տաճարի շեմքից: Սկզբում՝ մի փոքր հոսք էր, հետո հասնում էր ծնկներին, գոտկատեղին, մինչև որ դարձավ գետ, որը ոչ ոք չէր կարող անցնել:

*Եվ ամեն կենդանի շունչ, որ շարժվում է նրանում այն բոլոր տեղերում, ուր գնում է գետը, պիտի ապրի, և ձուկը խիստ շատ պիտի լինի, որովհետև այս **ջրերն այնտեղ են հասնում**, ուր նրանք պիտի թարմանան, և ամենքը պիտի **կենդանանան**, ուր էլ որ գնա գետը (Եզեկիել 47.9):*

1. *Այն սկսվում էր զոհասեղանից՝ որտեղ կատարվում էր զոհաբերությունը: Սա Քրիստոսի Խաչն է: Խաչից հոսեց արյուն և ջուր՝ մաքրություն և կյանք:*

2. *Գետը հոսեց դեպի արևելք՝ դեպի անապատը, և հասավ մինչև Մեռյալ ծովը: Եվ Տերը ասաց՝ **«Ջրերը կբժշկվեն»**:*

3. *Թող այդ գետը հոսի քո կյանքի մեջ, և քո դառնությունը դառնա քաղցրություն, քո մահացած վայրերը՝ կյանքի աղբյուր:*

ԿԵՆԴԱՆԻ ՋՈՒՐԸ – ՔՐԻՍՏՈՍ ԿՅԱՆՔԸ (ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.10–14)

Հակոբի ջրհորի մոտ Հիսուս ասաց սամարացի կնոջը.

«Եթե իմանայիր Աստծու պարգևը, և թե ո՞վ է նա, որ քեզ ասում է՝ "Ինձ խմելու ջո՛ւր տուր", ապա դո՛ւ նրանից կխնդրեիր, նա էլ քեզ կենդանի ջուր կտար»: Հովհաննես 4.10

11 Կինը զարմացավ. «Տե՛ր, դու նույնիսկ դույլ չունես»: իսկ ջրհորը խորն է. արդ կենդանի ջուրը որտեղի՞ց ունես:

13 Բայց Հիսուս պատասխանեց նրան ու ասաց. «Ով այդ ջրից խմի, կրկին կծարավի, 14 բայց ով խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, նա հավիտյան չպիտի ծարավի:

- *Եվ ահա տաճարի վարագույրը վերից վար երկու մասի պատռվեց. երկիրը ցնցվեց, ժայռերը ճեղքվեցին, **Նրա կողքից իսկույն արյուն ու ջուր դուրս ելավ** և գետը սկսեց հոսել: Այդ ջուրը դեռ հոսում է այսօր:*

ԿԵՆԴԱՆԻ ԳԵՏԵՐ – ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ԿՅԱՆՔԸ (ՀՈՎՀԱՆՆԵՍ 7.37–39)

*37 Եվ տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնած էր և **աղաղակում էր՝** ասելով. Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի: 38 Ինչպես Գիրքն է ասում. "Ով ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն:*

Հովհաննեսը բացատրում է. 39 Նա այս ասաց՝ նկատի ունենալով Սուրբ Հոգուն, որն ընդունելու էին նրան հավատացողները, որովհետև Սուրբ Հոգին դեռևս չունեին, քանի որ Հիսուսը դեռ փառավորված չէր:

- *Սիրելինե՛ր, գետը միայն ձեզ համար չէ – այն պետք է հոսի ձեզնից դեպի դուրս: Աստված չի ուզում, որ մենք լինենք լճեր. Նա ուզում է, որ լինենք հոսող գետեր:*

  Թող Սուրբ Հոգին հոսի ձեր միջով.
  Քո սրտից՝ դեպի ընտանիք,
  Քո աղոթքից՝ դեպի ծառայություն,
  Քո եկեղեցուց՝ դեպի աշխարհ,
  Քո կյանքից՝ դեպի կորածները:

Որտեղ գետը հոսում է՝ այնտեղ կյանք կա:

ԿԵՆԱՑ ՋՐԻ ԳԵՏԸ – ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 22.1–2)

*1 Հրեշտակն ինձ ցույց տվեց **կենաց ջրի գետը՝** փայլուն, ինչպես բյուրեղը, որ բխում էր Աստծու ու Գառան գահից:*
*2 Եվ նրա հրապարակի մեջտեղում՝ գետի այս ու այն կողմերում, **կենաց ծառն էր**, որ տասներկու պտուղ էր տալիս. ամեն ամիս իր պտուղն էր տալիս, իսկ ծառի տերևները ազգերին բժշկելու համար էին:*

1. *Գետը սկսվեց Եդեմում և ավարտվում է Գահի առաջ՝ փառքի քաղաքում:*

2. *Գետը հոսում է հենց Աստծո աթոռից՝ այն նույն գետը, որ սկսվեց որպես փոքրիկ հոսք Եզեկիելի տեսիլքում:*

3. *Գետը շրջապատում է կենաց ծառը, որի տերևները ազգերին բժշկելու համար են:*

Այլևս չորություն չկա – այլ միայն հավիտենական կյանք:

Այսօր նույն հրավերն է հնչում.

Հոգին ու հարսն ասում են. Արի՛: Լսողը ևս ասում է. Արի՛: Թող գա, ով ծարավ է, և ով կամենում է, թող ձրի վերցնի կենաց ջուրը (Հայտնություն 22.17)

- *Աստված դեռ փնտրում է տուն՝ մի ժողովուրդ, որի միջով Նա կարող է հոսել: Մի՛ փակիր գետը վախով, մեղքով կամ հպարտությամբ: Թող Սուրբ Հոգին հոսի:*

  Որտեղ գետը հոսում է՝ ***այնտեղ կա կյանք****,*

  որտեղ գետը հոսում է՝ ***այնտեղ կա բժշկություն****,*

  որտեղ գետը հոսում է՝ ***այնտեղ կա փրկություն****:*

  Թող եկեղեցին այսօր հռչակի.

  «Մենք ենք Աստծո Տունը, և մեր միջից հոսում է կենդանի ջրի գետը»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ